ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

18.08.2023 թվականին կնքված **N ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/11-1** գնման պայմանագրի

ք. Երևան «15» փետրվարի 2024թ.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, ի դեմս տնօրենի Լ. Ֆարմանյանի, ով գործում է Կոմիտեի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Բ. Թադևոսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 18.08.2023թ. կնքված **N ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/11-1** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի կողմ հանդիսացող «ՀՀ գիտության կոմիտե» այսուհետ շարադրել որպես «Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե»:

2. Պայմանագրի կողմ հանդիսացող «Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե»-ի հաշվեհամարը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. Հ/Հ 900011045565:

3. Պայմանագրով հաստատված Հավելված N 1 Տեխնիկական բնութագրում և Հավելված N 2 վճարման ժամանակացույցում գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. 30121600/1:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

1. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22	ք.Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011045565	Հ/Հ 1570011489540100
ՀՎՀՀ 02704199	ՀՎՀՀ 01210095
գլխավոր քարտուղար ---------- Լ. Ֆարմանյան	Տնօրեն ---------- Բ. Թադևոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ